



**ԼՂՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**ЗАМЕСТИТЕЛЬ ПРЕМЬЕР-МИНИСТРА,  
МИНИСТР ФИНАНСОВ НКР**

*No 03-3/412 13.04.2012թ. \_\_\_\_\_*

*Ձեր No \_\_\_\_\_*

**ԼՂՀ պետական կառավարման  
հանրապետական և տարածքային  
կառավարման մարմիններին**

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով վերապահված իրավասությունների շրջանակներում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը հայտնում է հետևյալը:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքի.

- 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գնային առաջարկների հաշվարկում առանձնացված ձևով ներկայացնում են մասնակցի կողմից վճարման ենթակա անուղղակի հարկերը.

- 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն բացառությամբ ԼՂՀ անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի, համաձայնեցված կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց ԼՂՀ պետական բյուջե վճարվելիք անուղղակի հարկերի գումարների հաշվարկման:

ԼՂՀ կառավարության 22.03.2011թ. N 133-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի համաձայն մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հաշվարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով վճարվելիք անուղղակի հարկերի գումարի չափը: Ընդ որում, մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ԼՂՀ կամ ՀՀ պետական բյուջե վճարվելիք անուղղակի հարկերի գումարի հաշվարկման:

ԼՂՀ հարկային օրենսդրության համաձայն անուղղակի հարկ են հանդիսանում ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը:

Հիմք ընդունելով վերոգրյալը հայտնում ենք, որ մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հաշվարկում առանձնացված տողով կարող է նախատեսվել միայն տվյալ պայմանագրի գծով վճարվելիք ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարի չափը: Ընդ որում, մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ԼՂՀ կամ ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների հաշվարկման: Ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկատեսակները (առևտրի հարկ, հաստատագրված վճար) անուղղակի հարկեր չեն հանդիսանում և գնային առաջարկների գնահատման և համեմատման ժամանակ հաշվի չեն առնվում:

Սույն պարզաբանումը ուժի մեջ է մտնում 2012թ. մայիսի 1-ից:

Միաժամանակ անհրաժեշտ է վերոհիշյալի վերաբերյալ տեղեկացնել ենթակա պետական հիմնարկներին և կազմակերպություններին:

**Ս. Թևոսյան**